

1921 թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՈՒ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

Ա. Հ. ՄԻՍՈՆՅԱՆ

Քեմալական զավթիչների կողմից Հայաստանի Հանրապետության դեմ 1920 թ. աշնանը սանձազերծված ավերիչ պատերազմը նոր աղետների դուռ բացեց հայ ժողովրդի համար: Դեկտեմբերի սկզբին Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր: Բայց դրանից ընդամենը երկուսուկես ամիս անց հայ ժողովուրդը ենթարկվեց մի նոր արհավիրքի՝ ներքաշվելով դաժան քաղաքացիական կռիվների մեջ:

Հայաստանում ներքին արյունահեղ կռիվների պատճառների մասին շատ է գրվել, ըստ որում այդ պատճառներին տրվել են տրամագծորեն հակառակ գնահատականներ խորհրդային և դաշնակցական պատմական գրականության մեջ:

Մույն հոդվածում անհրաժեշտ չհամարելով քննության առնել այդ գնահատականների ճշմարիտ կամ սխալ լինելը՝ նշենք միայն, որ Հայաստանում 1921 թ. փետրվարին սկսված քաղաքացիական պատերազմը արդյունք էր ինչպես նոր հաստատված խորհրդային իշխանության վարած չպատճառաբանված խստությունների ու անհարկի բռնությունների քաղաքականության, այնպես էլ իր իշխանությունը վերականգնելու համար Դաշնակցություն կուսակցության ընդհատակում կատարած նախապատրաստական աշխատանքների և նորաստեղծ կարգերի դեմ ապստամբության:

1921 թ. փետրվարի կեսերին Բաշ-Գառնիում, Վայոց Ձորում և Արագածի լանջերին գտնվող գյուղերում միաժամանակ տեղի են ունենում բացահայտ զինված ելույթներ:

Ելույթները ընդհանուր ապստամբության օրը՝ Թալինի և Բաշ-Գառնիի հակախորհրդային ուժերը փետրվարի 17-ի լույս 18-ի գիշերը անցնում են գործի:

Բաշ-Գառնիի ապստամբները գնդապետ Կոտո Թարխանյանի և խմբապետ Մարտիրոսի գլխավորությամբ հանկարծակի հարձակվում են Կոտայքի շրջանի տարբեր վայրերում տեղակայված, թվաքանակով մի քանի անգամ գերազանցող բոլշևիկյան ուժերի վրա:

Հարձակման հետևանքով ծանր կորուստներ են կրում Հայաստանի կարմիր բանակի 2-րդ գնդի զորամասերը: Կարմիր հրամանատարության կարգադրությամբ գունդը նահանջում է Նորթ և բռնում Քանաքեռ - Ավան - Ջրվեժ - Թոխմախան գյուղ գծի բարձունքները, բայց այս ռազմագիծը նույնպես հնարավոր չի լինում պահել: Գնդի հրամանատար Ֆիշիկ իջը հագիվ է կարողանում շրջապատումից դուրս բերել իր զորամասերի մնացորդները և նահանջել Աղբաշի ուղղությամբ:

Քանաքեռը գրավելուց հետո Կոտայքի ապստամբական ուժերը շարժվում են Երևանի վրա:

Նույն ժամանակ, փետրվարի 16-ին և 17-ին, Արագածի լանջերից դեպի Երևան շարժվող Թալինի ապստամբ ուժերը Աշտարակ-Էջմիածին ուղղության վրա ծանր պարտության են մատնում հայկական կարմիր բանակի 2-րդ բրիգադի զորամասերին և գրավում Էջմիածինը, Աշտարակը, Փարաքարը:

Եվ Քանաքեռից Երևան իջնող, և Էջմիածին - Աշտարակից այնտեղ շտապող ապստամբների առաջին խնդիրն էր գրավել Երևանի բանտը և ազատել բանտարկյալներին:

Այլևս չհանդիպելով լուրջ դիմադրության՝ ապստամբները երկու տարբեր ուղղություններով առաջ են շարժվում և, ընդհուպ մոտենալով Երևանի մատույցներին, երեք կողմից օղակում են մայրաքաղաքը:

Կարմիր զորամասերի դիմադրությունը Երևանում այլևս անիմաստ է դառնում, ուստի

դրանց հրամանատարների գլխավոր խնդիրը մնացած զորամասերին գերվելուց փրկելն էր:

Քանի որ Երևանի հյուսիսային և հյուսիս-արևմտյան ողջ տարածքները գտնվում էին ապստամբների վերահսկողության տակ, ուստի Հայաստանի Ռազմհեղկոնը որոշում է ընդունում թողնել մայրաքաղաքը և նահանջել Ղամարլուի ուղղությամբ: Խորհրդային զորամասերը հրաման ստացան նահանջել երկաթուղու կայարանի ուղղությամբ, որտեղ կանգնած էին «Ազատամարտ» և «Վարդան Չորավար» զրահագնացքները:

Փետրվարի 18-ի երկրորդ կեսին կարմիրբանակայինները, վերցնելով 8 վագոն ցորեն, մի քանի վագոն արկ և մեծ քանակությամբ ռազմամթերք, թողնում են Երևանը, կենտրոնանում հին ու նոր կայարաններում և դեպի Ղամարլու տանող խճուղու ուղղությամբ:

Երևանից նահանջելու նախօրյակին՝ փետրվարի 16-ի լույս 17-ի գիշերը, բուշևիկները Երևանի բանտում կացնահարում և զնդակահարում են մոտ 40 բանտարկյալների, այդ թվում՝ հայտնի ռազմական դեմքերի՝ Համազասպին և Մակեդոնին, խմբապետերի ու մտավորականների:

Երևան մտած ապստամբները, որոնց միացել էին քաղաքացիները, առաջին հերթին հարձակվեցին բանտի վրա և ազատ արձակեցին կալանավորներին:

Ստույգ մահից ազատվեցին բազմաթիվ պետական ու կուլակցական գործիչներ, նշանավոր մտավորականներ, այդ թվում՝ Հովհաննես Քաջագունին, Համո Օհանջանյանը, Նիկոլ Աղբալյանը, Լևոն Շանթը և ուրիշներ:

Չրահագնացքների ուղեկցությամբ նահանջելով Ուլուխանլու՝ խորհրդային զորամասերը, ծանր մարտեր մղելով, քաշվում են Վեդիբասարի տարածքը և բռնում Բոյուբ Վեդի - Ենգիջա, Զյուլուկ Վեդի - Խոր Վիրապ - Թայթան - Շիրազլու գիծը:

Խորհրդային կառավարությունը, Հայկոմկուսի կենտկոնը և բանակի շտաբը հիմնավորվում են Ալշարի մոտ, երկաթուղային վագոններում: Այստեղ կարմիր զորամասերը վերակազմվում են և նախապատրաստվում վճռական մարտերի:

Միաժամանակ Խորհրդային Հայաստանի կառավարությունը դիմում է Հայաստանի Հանրապետության դեմ՝ 1919 թ. Բոյուբ Վեդիի թուրքերին ոտքի հանելու գործում մեծ դեր խաղացած Նախիջևանի բեկերից մեկին՝ Աբաս Կուլուն՝ խնդրելով տեղի թուրքերից կազմակերպել ջոկատ և միանալ կարմիր զորամասերին: Բեկն ընդունում է առաջարկը և մինչև մարտի սկիզբը կազմակերպում 400 հոգուց բաղկացած մի ջոկատ, որը ստանում է, այսպես կոչված, «Կարմիր տաքոր» անվանումը:

Երևանը գրավելուց անմիջապես հետո ապստամբական ուժերը ստեղծեցին կառավարություն՝ «Հայրենիքի փրկության կոմիտե» անունով: «Կոմիտեի» գլուխ կանգնեց Հայաստանի Հանրապետության վերջին վարչապետ Միմոն Վրացյանը: Դրանով իսկ ապստամբները նաև ընդգծում էին, որ Հայրենիքի փրկության կոմիտեն Հայաստանի Հանրապետության կառավարության անմիջական շարունակությունն է:

Փրկության կոմիտեի մեջ վարչապետի պաշտոնից գատ Ս. Վրացյանը վարում էր նաև արտաքին գործոց նախարարի պաշտոնը: Նրա՝ դահլիճի անդամ-նախարարներն էին Արշակ Հովհաննիսյանը (զինվորական), Կարո Սասունին (ներքին գործոց), Համբարձում Տերտերյանը (եւմտական), Հակոբ Տեղ-Հակոբյանը՝ Իրազեկ (պարենավորման), բժ. Մմբատ Եղիազարյանը (խնամատարական), Հ. Մարգարյանը (պրոպագանդայի և աշխատանքի): Կոմիտեում Հ. Յ. Դաշնակցության ներկայացուցիչն էր Եփրեմ Սարգսյանը: Բանակի հրամանատար նշանակվեց սպա Սուրեն Թախանյանը (Կոտո), շտաբի պետ՝ Գարեգին Սարգիսբեկյանը: Երևանի քաղաքագլուխ նշանակվեց Արշալույս Աստվածատրյանը¹:

Մայրաքաղաքին տիրելուց հետո ապստամբները շարունակեցին մարտական գործողությունները՝ նպատակ ունենալով կարճ ժամանակում ջախջախել կարմիր զորամասերը և որքան հնարավոր է արագ վերականգնել իրենց իշխանությունը Խորհրդային Հայաստանի ողջ տարածքի վրա:

Այսպիսով, ընդամենը 3-4 օրում ապստամբներին հաջողվեց շատ արագ գրավել Արագած լեռան հարավային և արևելյան փեշերը, Աշտարակը, Արարատյան դաշտի զգալի մասը, Բաշ-Գառնիի շրջանը և այլ տարածքներ: Բայց նրանց ուժերը անբավարար էին ռազմական ավելի մեծ գործողություններ ծավալելու և ավելի մեծ արդյունքներ ձեռք բերելու համար:

¹ Ս. Վրացեան, Կեանքի ուղիներով: Դեպքեր, դեմքեր, ապրումներ, Ձ. հատոր, Պեյոուք, 1967, էջ 38-39:

«Փրկության կոմիտեի» օրգան «Ազատ Հայաստան» թերթը, որը սկսել էր լույս տեսնել փետրվարի 19-ից, թիվ 1-ի խմբագրականում գրում էր.

«Այն շարժումը, որ մեր ազատագրական պատմության մեջ կմնա **անմահ**, գերազանցորեն ժողովրդական էր, վկա այն նմանը չտեսնված խանդավառությունը, որով տոգորված, անգամ կանայք և անչափահաս պատանիներ, հրացանները գրկած՝ նետվել էին փողոց՝ բռնաճակատ կռիվներին մեր երկրից դուրս շարժելու համար: Բայց այս շարժումը, ժողովրդական այս բուռն, տարերային պռոթությունը ուղղված չէ Ռուսաստանին և ոչ էլ նրան ղեկավարող կուսակցության: Մենք եղել ենք բարեկամը և սիրողը ռուս մեծ ժողովրդին և այսուհետև էլ կշարունակենք մնալ նույնը, պայմանով միայն, որ հյուսիսի մեր մեծ դրացին փոխադարձաբար հարգե մեր ժողովուրդը և նրա արյունով վաստակած անկախությունը»²:

Առաջին անհաջողությունից ուշքի գալով՝ կարմիր զորամասերը սկսեցին ուժգին դիմադրություն ցույց տալ ապստամբներին: Ավելին, վերախմբավորելով ուժերը՝ նրանք փետրվարի 25-ին երկու զորասյունով՝ հայկական հրաձիգ բրիգադի հրամանատար Միրիմանյանի հրամանատարությամբ, հարձակման անցան Երևանի վրա՝ գլխավոր հարվածն ուղղելով ապստամբական խմբերի ծախս թևին: Իր հերթին, Ֆիշիկսիչի 2-րդ գումղը, վերակազմվելով, հարձակման է անցնում աջ թևով:

Սկսվում են համառ, արյունահեղ կռիվներ: Կարմիր զորամասերին հաջողվում է առաջ շարժվել և փետրվարի 26-ին հասնել Երևանի մատույցները:

Սակայն մայրաքաղաք կարմիրբանակայիններին մտնել չի հաջողվում: Ռազմաճակատում գտնվող «Փրկության կոմիտեի» ուժերին օգնության են գալիս ապստամբական նոր ջոկատներ, որը հնարավորություն է տալիս անցնել հակահարձակման: Հատկապես ակտիվ էր գործում հեծելազորը: Եռօրյա մարտերից հետո բռնաճակատի զորքերը, զգալի կորուստներ կրելով, նահանջում են ելման դիրքերը:

Շուտով Միրիմանյանը նշանակվում է ամբողջ Դամարլուխ ռազմաճակատի կարմիր զորքերի հրամանատար, որը և ձեռնարկում է նոր հարձակում:

Մայրաքաղաքը զրավելու նպատակով փետրվարի 28-ի առավոտյան կարմիր զորամասերը բոլոր ճակատներով առաջանում են և, զրավելով Ներքին Շենգավիթն ու Չարբախի այգիները, ամրանում են Երևանի երկաթուղային կայարանից հյուսիս-արևելք և գերեզմանոցից հարավ գտնվող բարձունքներում:

Միաժամանակ Վայոց Ձորի կողմից Բաշ-Նորաշենի վրա խմբապետ Յապոնի հնարավոր հարձակումը թիկունքից կանխելու նպատակով կարմիր հրամանատարության հրամանով Աբաս Կուլի բեկը իր ջոկատով փակում է Վայոց Ձորից Բաշ-Նորաշեն եկող ճանապարհի դարպասը:

Բռնաճակատի նոր հարձակմանն ի պատասխան, ապստամբները, Աղջողալա - Հաջի Էյլակի շրջանում կենտրոնացնելով մեծ թվով հեծելազոր և հրետանի, հակահարձակման են անցնում ամբողջ ճակատով: Կորուստներ տալով՝ կարմիր զորամասերը նահանջում և ամրանում են Աղբաշ - Իմանշալու - Բուզումլու գծամասերում:

Մեծ ուժեր կենտրոնացնելով 2-րդ գնդի տեղամասում՝ մարտի 1-ին ապստամբները շարունակում են հակահարձակումը: Չդիմանալով ուժգին ճնշմանը, գումղը ետ է քաշվում Բոյուք Վեդի: 3-րդ կարմիր գումղը ամրանում է Ենգիջա - Բյուչուկ Վեդի և Խոր Վիրապ գծամասերում: 178-րդ ռուսական գումղը զբաղեցնում է Արաքս գետի ծախս ափի Արարատ կայարանի և Սադարակ գյուղի միջև եղած տարածությունը: Բրիգադի շտաբը, զրահագնացքները և հրետանին մնում են Շիրազլուում³:

Մարտի 1-ից մինչև 8-ը ռազմաճակատում համեմատաբար հանգիստ էր, երկու հակառակորդ կողմերը պատրաստվում էին վճռական գործողությունների:

Փրկության կոմիտեն գերմարդկային ճիգեր էր գործադրում իր իշխանությունն ամրապնդելու, զորամասերը համալրելու և կարգի բերելու, ամուր կարգ հաստատելու համար:

«Լինենք անողոր» վերնագրով խմբագրականում «Ազատ Հայաստան» թերթը գրում էր. «Հայրենիքի Փրկության կոմիտեն, որ համընկալատարն է այսօրվա ըմբոստ գյուղացիության և աշխատավորության, իբրև ղեկավարող, հանուն մեր բարձրագույն շահերի, այժմ լինի այսու-

² «Ազատ Հայաստան», 1921, 19 փետրվարի, թիվ 1:

³ Տե՛ս Գ. Օգանձով, Դիվիզիայի հրամանատար Աթոյան, «Հայաստան», Երևան, 1978, էջ 57-60:

հետև... խիստ, անողոք բոլոր նրանց նկատմամբ, որոնք հանդգնություն կունենան որևէ կերպ այս ու այն կողմը շուտ տալ մեր ազգային քաղաքական կյանքի անիվը»⁴:

Այդ օրերին զանգեզուրյան զորքերը գրավել էին Վայոց Ձորը: Գորիսից Նժդեհը Վայոց Ձոր է գալիս՝ տեղյակ չլինելով փետրվարյան ապստամբության մասին: Իմանալով՝ նա մեծ ուրախություն է ապրում: Լուրը Ձանգեզուրում նույնպես ընդունվում է ցնծությամբ: Նժդեհը Քեչիշքենդից անմակ է ուղարկում Երևան և հետևյալ խոսքերով ողջունում Մայր Հայաստանում տեղի ունեցած հեղաշրջումը. «Մրտի անհուն բերկրանքով ողջունում են Արարատյան հայրության ապստամբությունը և ազատագրումը օտար լծից: Ինքնավար Լեռնահայաստանի ժողովուրդը կարոտով սպասում է այն երջանիկ ընդհանր, երբ քաղաքական հնարավորություն կունենա միանալու իր մայր երկրին»⁵: Նա ողջուն է ուղարկում նաև Փրկության կոմիտեի զորքերին, ուր կային այս խոսքերը. «Եթե խորապես գիտակցենք, ճապոնական կայսրի հետ կրկնում են, որ սերը դեպի հայրենի երկիրն ու ժողովուրդը ավելի մոտ է կանգնած Մեծ ու Գեղեցիկ Արևին, քան մեր հայրենիքի ամենաբարձր լեռները, այն ժամ մահը քիթեռնիկի քևից էլ թեթև կքվա»⁶:

Իր հերթին Լեռնահայաստանի կառավարության նախագահ Գեղեճն Տեր-Սիմոնյանը Գորիսից Փրկության կոմիտեի նախագահ Ս. Վրացյանին ուղարկում է հետևյալ հեռագիրը. «Ութն ամիս տևող ապստամբական կռիվները Լեռնահայաստանի սահմաններում հերոս Նըժդեհի գլխավորությամբ ստեղծեցին ազատ և ինքնավար Սյունիքը, որի կառավարությունը երջանիկ է այսօր ողջունելու Մայր Հայաստանի ազատագրումը: Սյունիքի առյուծները կազմ և պատրաստ սպասում են իրենց պաշտելի սպարապետի հրամաններին՝ լրացնելու այն պակասը, որ դեռևս ունի մեր Մայր Հայաստանը»⁷:

Փետրվարի 27-ին Նժդեհը ժամանում է Քեչիշքենդ և տեղի ժողովրդի կողմից ընդունվում մեծ խանդավառությամբ: Նա մոտիկից հաղորդակից է լինում գյուղացիների տրամադրություններից, լսում նրանց պահանջները⁸:

Մարտի 2-ին Քեչիշքենդում հրավիրվում է գյուղացիական համագումար, որը որոշում է ընդունում Վայոց Ձորը միացնել Սյունիքին⁹:

Փաստորեն հիմք էր դրվում Լեռնահայաստանին, իսկ Սյունիքի սպարապետ Նժդեհն այսուհետև դառնում էր Լեռնային Հայաստանի սպարապետ: «Ազատ Հայաստան»-ը գրում էր. «Ձանգեզուրից ստացված վերջին տեղեկությունների համաձայն Նժդեհն ընտրված է Լեռնահայաստանի ընդհանուր սպարապետ, որն այսօր ամբողջ Լեռնահայաստանի ժողովրդի պաշտամունքի առարկան է»¹⁰:

Այա թերթը նշում էր. «Կազմվել է ինքնավար Լեռնահայաստան, որի մեջ մտնում են՝ Դարալագյազը, բուն Ձանգեզուրը, Միսիանը, Ղափանը, Գողթանը, Մեղրին և Լեռնային Դարաբազը (Դիզակ, Վարանդա և Խաչեն)»¹¹:

Միաժամանակ Վայոց Ձոր գալուց հետո Նժդեհը այստեղից կապ է հաստատում Սևանի ավազանի հակաբոլշևիկյան ընդհատակի հետ՝ նպատակ ունենալով այնտեղ հրահրել ապստամբություն:

«Նժդեհը իր գործնասով մոտ օրերս սպասվում է Նոր Բայազետում»¹², - գրում էր «Ազատ Հայաստան» թերթը:

Սևանի ավազանի հակախորհրդային ուժերը, ստանալով Երևանում և այլուր սկսված ապստամբության լուրը, ինչպես նաև Նժդեհի հրահանգները, իրենք նույնպես գործի են անցնում և բարձրացնում ապստամբության դրոշ:

Այստեղ առաջինն ապստամբում է Բասարգեշարում կանգնած բոլշևիկյան թնդանոթաձիգ գունդը, որը շարժվելով դեպի Նոր-Բայազետ քաղաք՝ առանց կռիվ գրավում է այն: Տեղի բոլշևիկյան ուժերը հեռանում և ամրանում են Սևանա լճի հյուսիսային մասում ընկած Ելենովկա՝ ռուս մոլոկանների գյուղում և նրա շրջակա բարձունքների վրա:

⁴ «Ազատ Հայաստան», 1921, 6 մարտի, թիվ 14:

⁵ Նույն տեղում, 9 մարտի:

⁶ Նույն տեղում, 17 մարտի, թիվ 22:

⁷ Նույն տեղում, 1921, 15 մարտի, թիվ 20:

⁸ Տե՛ս նույն տեղը, 1921, 4 մարտի, թիվ 12, տես նաև՝ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 37, ց. 1, գ. 24, ք. 3:

⁹ Տե՛ս ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 37, ց. 1, գ. 24, ք. 3:

¹⁰ «Ազատ Հայաստան», 1921, 9 մարտի, թիվ 16:

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում:

Այդ առթիվ Երևանից Փրկության կոմիտեի ռադիոբանդերը եթեր արձակեց հետևյալ հաղորդագրությունը. «Մարտի 5-ին Նժդեհի դարալազյազյան ջոկատը գրավել է Նոր-Բայազետ քաղաքը*, այն մաքրելով բոլշևիկներից: ... Գերված է 400 ռուսական կարմիր զինվոր և ողջ հրամանատարական կազմը, վերցված է 4 թնդանոթ, 100 միլիոն ռուբլի, մանուֆակտուրա, 100 փութ աղ, ուրիշ ավար: Գյուղացիական համագումարը Դարալազյազը միավորել է հակախորհրդային Չանգեզուրին՝ իր ներկայացուցիչը ուղարկելով Սյունիքի կառավարության մեջ:

Հռչակված է Լեոնային Հայաստան, որի կազմի մեջ են մտնում Չանգեզուրը, Ղարաբաղը, Դարալազյազը»¹³:

Մտավորապես նույն բովանդակության հաղորդագրությամբ մարտի 7-ին հանդես եկավ Փրկության կոմիտեի տեղեկատու բյուրոն: Հաղորդագրությունը վերնագրված էր՝ «Կեցցե ապստամբ Լեոնա-Հայաստանը»¹⁴:

Այդ դեպքերի մասին Վայոց Ձորում գտնվող Նժդեհին Նոր-Բայազետից գրում է խմբապետ Աղաբեկը: Իր հերթին՝ Սպարապետը այնտեղ է ուղարկում իր խմբապետներից երկուսին՝ Մեսրոպին և Գառնիկ Շահինյանին, որոնք անձամբ պետք է տեղում ծանոթանային իրերի վիճակին և շտապ գեկուցեին իրեն: Երկու օր անց Աղաբեկի, Մեսրոպի և Գառնիկի ստորագրությամբ Նժդեհը ստանում է հեռախոսագիր, որով նրան խնդրում էին անցնել Նոր-Բայազետ: Դեռևս խիստ անհրաժեշտ չհամարելով Վայոց Ձորը թողնելը և Սևանի ավազան անցնելը՝ նա չի ընդառաջում խնդրանքին: Բայց հետևում է երկրորդ խնդրագիրը:

Յապոնին հրահանգելով Չանախչու վրայով կապվել Երևանի հետ՝ Նժդեհը մի քանի հեծյալներով Շատին գյուղի մոտով, Սեփի մի լեռնանցքով շարժվում է դեպի Սևանի ավազան: Անցնելով լեռնանցքը՝ նա կանգ է առնում ճանապարհի վրա ընկած գյուղերում, հանդիպում ժողովրդի հետ, ելույթներ ունենում:

Հասնելով Ներքին Ղարանլուխ (Մարտունի) Նժդեհն այնտեղ ստանում է Հայրենիքի Փրկության կոմիտեի նախագահ Միմոն Վրացյանի՝ դեռ փետրվարի 20-ին Երևանից գրած նամակը, որը հասցեագրված էր իրեն և Ռուբեն Տեր-Մինայանին: Նամակն ուշացել էր, քանի որ սուրհանդակները ճյան առատության պատճառով չէին կարողացել հաղթահարել Սևանից Չանախչու վրայով Վայոց Ձոր գնացող ճանապարհը և ստիպված վերադարձել էին Երևան ու այս անգամ Վայոց Ձոր մեկնել Ախտա - Ուլքախա - Նոր-Բայազետ - Ղարանլուխ - Շատին գծով: Տեղեկանալով, որ Նժդեհը ոչ թե Վայոց Ձորում է, այլ եկել է Ներքին Ղարանլուխ, սուրհանդակներն այստեղ էլ նրան հանձնում են Վրացյանի նշված նամակը:

Փրկության կոմիտեի նախագահը գրում էր փետրվարյան ապստամբության հաջողության, Բաշ-Ապարանի, Թալիհի, Աշտարակի, Կոտայքի, Երևանի, Էջմիածնի, Չանգիբասարի շրջանները բոլշևիկներից ազատելու մասին, միաժամանակ հույս էր հայտնում, որ շուտով կազատագրվեն նաև Նոր-Բայազետը, Ղազախը, Լոռին: Տեղեկացնում էր նաև, որ Ղամարուփ կողմեր նահանջած Հեղկոմի անդամները և բոլշևիկյան ուրիշ ղեկավարներ իրենց հետ տարել են երկու զրահագնացք, ունեն 1000-ի չափ զինվոր, որի կեսից ավելին ռուսներն են: «Ժողովուրդն ամեն տեղ խանդավառ է և մեզ հետ է»¹⁵, - ասված էր նամակում:

Ներքին Ղարանլուխից Նժդեհն անցնում է Նոր-Բայազետ, որտեղ մարտի 8-ի երեկոյան Հանո Օհանջանյանից ստանում է մի երկտող, ուր ասված էր, որ Սյունիքի հրամանատարի՝ Նոր-Բայազետ գալով փաստորեն պաշտոնական կապ է ստեղծված Չանգեզուրի և Մայր Հայաստանի միջև:

Ինչպես Ս. Վրացյանը, այնպես էլ Հ. Օհանջանյանը Նժդեհին գրած իրենց նամակներում նրան ակնարկներ էին անում, որ նախապես անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել, որպեսզի հարկ եղած դեպքում ապստամբները դեպի Սյունիք նահանջելու արահետ ունենան: Վրացյանն ի միջի այլոց գրել է. «Մի բանի վրա միայն առանձնապես շեշտում են, և խնդրում են ուշադրության առնել՝ Դարալազյազ - Չանգեզուր - Երևան գծի բացումը մեզ համար շատ է կենսական և անհետաձգելի, ինչպես նաև մարտական օժանդակություն հասցնելը: Ամեն գնով պետք է կապվեք մեզ հետ՝ ճանապարհը ապահովելու»¹⁶:

* Ինչպես ասվեց, Նոր-Բայազետը գրավել էր Բասարգեշարում ապստամբած հայկական կարմիր բանակի թնդանոթաձիգ գունդը, այլ ոչ թե Վայոց Ձորի Նժդեհի զորամասը:

¹³ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 34:

¹⁴ Նույն տեղում, թ. 30:

¹⁵ «Հայրենիք», ամսագիր, 1925, հուլիս, թիվ 9 (33), էջ 79:

Ընդառաջ գնալով Սևանի ավազանի ապստամբական զորամասերի հրամանատարության խնդրանքին՝ Նժդեհն այստեղից գրոթյուն է ուղարկում Վայոց Ձոր և պահանջում Նոր-Բայազետին օգնության ուղարկել սիսիանցիներից կազմած մի վաշտ, իսկ ինքը վերադառնում է Սյունիք:

Կատարելով Մ. Վրացյանի խնդրանքը՝ Նժդեհը Չանգեզուրի Արևմտյան ճակատի հրամանատար Յապոնին, որի մոտ այն ժամանակ գտնվում էր Ռուբեն Տեր-Մինասյանը, կարգադրում է Քոմուրլու գծից, ինչ գնով էլ լինի, առաջ շարժվել և գրավել մինչև Քիրալու ընկած տարածքները, միանալ Փրկության կոմիտեի՝ Ղամարլուխ ու Չիմանքենդի զորամասերին և դրանով իսկ ապահովել ճանապարհները: Նժդեհի հրամանը կատարվում է, և նահանջի հուսալի ուղի է բացվում Արարատյան դաշտից դեպի Չանգեզուր:

Այդ առթիվ «Ազատ Հայաստանը» գրում էր. «Անկախ և ազատ Չանգեզուրն ևս օգնության ձեռք է երկարում մեզ: Պաշտոնական աղբյուրից հաստատվում է, որ Նժդեհի հետախույզները սկսել են կապ հաստատել Ղամարլուխ մեր զորամասերի հետ, որոնք հետապնդում են թըլմանուն»¹⁷: Մի ուրիշ հաղորդագրության մեջ թերթը նշում էր. «Նժդեհի հետախույզները մտել են Ղամարլու և կապ հաստատել Մարտիրոսի զորամասի հետ»¹⁸:

Չնայած առաջին հաջողություններին, ապստամբները քաջ գիտակցում էին, որ ավելի հեշտ է իշխանություն գրավելը, քան այն պահելը: Իսկ իշխանություն պահելու համար նրանք հեռանկար չունեին: Մեծ մասամբ անկանոն ապստամբական ուժերը չէին կարող դիմագրավել մեծաքանակ և լավ զինված կարմիր զորամասերին: Բացի այդ, գրավված շրջանների բնակչությունը խանդավառված չէր սկսված ապստամբությունով, քաջ գիտակցելով, որ արյունահեղ կոիվները նոր զոհեր են խլելու բազմատանջ հայությունից: Մակայն առավել անդետալին այն էր, որ մեծապես ընկած էր ապստամբների բարոյական ոգին:

Ելենովկայի ճակատի կոիվներին ակնառեստ Համո Օհանջանյանը մարտի 10-ին Գարեգին Նժդեհին գրում էր. «... Պիտի խոստովանեմ. ինձ բավական վիատեցրել են այստեղի ուժերը՝ իրենց խուճապային տրամադրությամբ: Ամոք մեզ երեք անգամ հարձակում գործեցինք Ելենովկայի վրա և չկարողացանք վերցնել: Վաղը չորրորդ անգամն ենք հարձակվում...»¹⁹:

Նժդեհը Երևանից ստանում էր բազմաթիվ ուրիշ նամակներ և ս, գրույցներ էր ունենում այնտեղից Չանգեզուր եկած զործիչների հետ: Տպավորությունը մեկն էր. ապստամբ զորամասերը և նրանց սպայությունը բարոյապես լքված են ու ծայրահեղ ընկճված:

Պատահական չէ, որ Փրկության կոմիտեի անդամներից ոմանք հարց էին բարձրացրել Գարեգին Նժդեհին Չանգեզուրից Երևան հրավիրելու և նրան ապստամբական զինված ուժերի ընդհանուր հրամանատար նշանակելու մասին:

Մարտի 10-ի իր նամակում Համո Օհանջանյանը Նժդեհին գրում էր. «Մեծ հույսեր ունեմ, որ Ձեր գալուստը պիտի ոգևորե և քաջալերություն ներշնչե այդտեղի և այստեղի ուժերին...»²⁰:

Ապստամբների իշխանությունը հեճման կետեր չունեի նաև դրսում և, կարելի է ասել, լիովին մեկուսացած էր: Կռվելով բուշխիկյան զորքերի դեմ՝ Հայրենիքի Փրկության կոմիտեն դաշնակիցներ չունեի Հայաստանը շրջապատող երկրների թվում: Թուրքիան սպասողական վիճակում հետևում էր իրադարձությունների հետագա, իր համար բարենպաստ, զարգացմանը, որպեսզի վերջնականապես թաղի հայկական հողային պահանջների հարցը: Պարսկաստանը Հայրենիքի Փրկության կոմիտեի հանդեպ թեև լոյս էր, բայց տրամադիր չէր գործնական օգնություն ցույց տալու: Վրաստանն, ըստ էության, չեզոք դիտողի դերում էր: Ադրբեջանի իշխանությունները կարծես հենց փետրվարյան ապստամբությանն էին սպասում, որպեսզի Ռուսաստանի օգնությամբ իրենց օգտին լուծեն Հայաստանի հետ ունեցած հողային հաշիվները, «անտղելի» հայերից խլեն և Ադրբեջանին միացնեն Նախիջևանի, Լեռնային Ղարաբաղի և Չանգեզուրի «վիճելի» տարածքները:

Հայրենիքի Փրկության կոմիտեի միակ աջակիցները Չանգեզուրի զինյալներն էին:

Ապստամբության կազմակերպիչները, սակայն, հույս ունեին ակտիվ գործողությունների միջոցով փոխել իրենց համար խիստ անբարենպաստ ռազմաքաղաքական իրավիճակը:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ «Ազատ Հայաստան», 1921, 25 փետրվարի, թիվ 6:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ «Նորք» հանդես, 1923, թիվ 3, էջ 333:

²⁰ Նույն տեղում:

Ստեղծման հենց առաջին իսկ օրից Հայրենիքի Փրկության կոմիտեն սկսեց դրսի ուժերի հետ կապեր հաստատելու ելք փնտրել՝ նրանց հետ լեզու գտնելու, լիակատար մեկուսացումից դուրս գալու համար: Այդ նպատակով նա ակտիվ քայլեր արեց՝ սերտ կապերի մեջ մտնելու պարսկական խաների հետ: Դրան կառող էին նպաստել այն լավ հարաբերությունները, որոնք 1918-1920 թթ. ստեղծված էին Հայաստանի Հանրապետության և Պարսկաստանի, իսկ այժմ՝ Հյուսիսային Պարսկաստանի և Չանգեզուրի, այնտեղի խաների և Նժդեհի միջև: Կոմիտեն հույս չունեք ստանալ անմիջական օգնություն Պարսկաստանից, որովհետև Երևանի և Թավրիզի միջև ընկած տարածություններում կարմիր գործնասեր էին, իսկ Նպիխջևանում՝ նաև քեմալական գործադիրներ: Բայց ապստամբները մտածում էին գալիքի մասին, այն մասին, որ պարտության դեպքում իրենց միակ փրկությունը կլինի անցնել Պարսկաստան և հովանավորվել այնտեղի իշխանությունների կողմից:

Հայրենիքի Փրկության կոմիտեն ինչ-որ չափով ակնկալում էր նաև վրացական մենչևիկյան կառավարության աջակցությունը: Բայց հույսերը մեծ չէին: Վրացական կառավարությունը ինքը սարսափի մեջ էր սպասվելիք իրադարձություններից և հազիվ թե կարողանար որևէ լուրջ օգնություն ցույց տալ Հայաստանի ապստամբներին:

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա այդ դեպքում Հայրենիքի Փրկության կոմիտեի հոգսն այն էր, որպեսզի՝ ա) թուրքերին հեռու պահի իրադարձություններին միջամտելու գայթակղությունից, բ) եթե հնարավոր է, օգնություն խնդրել նրանից:

Ինչպես արդեն ասվել է, դեռ մինչև Հայաստանում խորհրդային իշխանության հաստատվելը դաշակների գլխավորած կառավարության մեջ ստեղծվել էր գաղափարական մի հոսանք, որի փոքրաթիվ ներկայացուցիչները և, առաջին հերթին, Արտաշես Չիլինգարյանը գտնում էին, որ Հայաստանի հետագա գոյության երաշխիքը հայ-թուրքական տանելի հարաբերություններ հաստատելն է: Եվ ահա այժմ, Երևանում և հարակից շրջաններում իշխանությունը ժամանակավորապես գրավելուց հետո, Փրկության կոմիտեն քայլ արեց թուրքերի հետ հարաբերությունները բարելավելու, նրանց հետ ընդհանուր լեզու գտնելու համար:

Բաշգառնեցի խմբապետ Մարտիրոսը իր հուշերում նշել է. Կոմիտեի ղեկավարները գտնում էին, որ «տաճիկների քաղաքական ու ազգային շահերի տեսակետից շատ ավելի ձեռնառու է, որ Հայաստանը լինի Ռուսաստանից անջատված ու անկախ, քան թե նրա մեկ անբաժան մասը դառնա: Ուստի և մեր հակախորհրդային պայքարին նրանք չպիտի խանգարեն: Տաճիկական ճակատից գեթ առայժմ վտանգ չկա»²¹:

«Հայ և թուրք բարեկամության խնդիրը» վերնագրով խմբագրական հոդվածում «Ազատ Հայաստան» թերթը գրում է. «Իրերի պատմական բերումով Անդրկովկասի ժողովուրդների քաղաքական ազատության իրական պաշտպանը կարող է դառնալ միայն Տաճկաստանը: Որովհետև Տաճկաստանն էր այն միակ իրական մերձավորագույն քաղաքական ուժը, որ անմիջապես և կենսապես շահագրգռված է Անդրկովկասի ժողովուրդների կատարյալ ազատագրությամբ բոլշևիկյան Ռուսաստանի խեղդող լծից և որ ի վիճակի է այս պահին իրական օգնություն հասցնել իրենց ազատության համար հերոսաբար կռվող Անդրկովկասի ժողովուրդներին»: Ապա թերթը շարունակում էր. «Իր ազատագրական պայքարի այս տաժանելի օրերին հայ ժողովուրդը քաղաքական իմաստություն պիտի ունենա թոթափելու իրենց անցյալի դառն հուշերն ու ավանդությունները և ոչինչ չխնայելու հայ և թուրք ժողովուրդների, Հայաստանի և Տաճկաստանի բարեկամությունը հաստատելու համար: Թուրք ժողովուրդի, Տաճկաստանի գործուն բարեկամությամբ է միայն, որ հայ ժողովուրդը պիտի դուրս գա իր ներկա ծանր տագնապից, և թուրք ժողովուրդի հետ միասին է; որ հայ ժողովուրդը պիտի կարողանա՝ վերջապես ձեռք բերել տևական խաղաղություն և տևական ապահովություն: Ուրիշ ճանապարհ չկա...»²²:

Ինչպես տեսնում ենք, Վրացյանը և ընկ. սխալ պատկերացում ունեին իրենց շուրջը ծավալվող իրադարձությունների մասին: Դրա վկայություններից էր, օրինակ, մարտի 7-ի երեկոյան Փրկության կոմիտեի տեղեկատու բյուրոյի տված հաղորդագրությունը, որով ի լուր ամենքի հայտարարվում էր. «Ամբողջ թրքությունը մեզ հետ է և բոլշևիկների դեմ»²³:

²¹ «Հայրենիք» ամսագիր, 1956, թիվ 7, էջ 40:

²² «Ազատ Հայաստան», 1921, 15 մարտի, թիվ 20:

²³ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, ք. 30:

Մարտի 10-ին Վրացյանը Աշտարակի փրկության կոմիտեի նախագահի հետ ունեցած հեռախոսազրույցում հայտնում էր. «Ռուսաստանում հեղափոխական շարժումներն ուժեղանում են: Կրոնշտադը դարձել է հակաբոլշևիկյան հեղափոխության օջախ. շարժումը ղեկավարում են Էսենները: Լոնդոնի կոնֆերանսը զբաղված է հայ-տաճկական հարցով, հետևանքը դեռ հայտնի չէ: Երեկ տաճիկ ներկայացուցիչը հայտնեց, որ իր դիմումի հետևանքով Էրզրումից արդեն ճանապարհ են հանված դեպի Երևան գեմ. Արարատյանը և գնդ. Վեքիլովը: Մյուս գերիների հարցը նույնպես կլուծվի այս օրերս»²⁴:

Դաշնակիցներ ձեռք բերելու համար նախ և առաջ անհրաժեշտ էր ռազմաճակատում մի խոշոր հաղթանակ տանել:

Մարտի 8-ի առավոտյան ապստամբական ջոկատները հարձակման անցան Զյուլուկ Վեդիի և Խոր Վիրապի ուղղություներով և երկու ժամ տևած կատաղի մարտերից հետո գրավեցին այդ տարածքները: Մակայն հաջողությունը տևական չէր: Ապստամբական ուժերը բոլշևիկյան զորամասերի ճնշման տակ նույն օրվա երեկոյան ստիպված էին նահանջել ելման դիրքերը:

Մարտի 9-18-ը նորից ճակատում հարաբերական հանգիստ էր: Բոլշևիկները պատրաստվում էին վճռական հարձակման Երևանի վրա²⁵:

Այդ նույն ժամանակ Մոսկվայում իր աշխատանքներն էր շարունակում ռուս-թուրքական կոնֆերանսը, որը քննարկում էր Հայաստանի սահմանների հարցը: Խ. Հայաստանի պատվիրակությունը մերժում էր ստացել մասնակցելու կոնֆերանսի աշխատանքներին: Այդ, Մոսկվայում հայ ժողովրդի համար քննարկում էին ճակատագրական հարցեր՝ առանց նույնիսկ Հայաստանի բոլշևիկյան կառավարության ներկայացուցիչների մասնակցության: Օտարները որոշում էին հայ ժողովրդի բախտը, իսկ Հայաստանում նույն ժողովրդի զավակները եղբայրական պատերազմում կոտորում էին միմյանց:

Այդ օրերին Ղամարլուի ճակատի կարմիր զորքերի կապի պետին հաջողվում է Արարատ կայարանում եղած ավտոմոբիլային ռադիոկայանը կարգի բերել և Դիլիջանի ռադիոկայանի միջոցով կապ հաստատել Բաքվի և Թիֆլիսի հետ:

Մարտի կեսերին 11-րդ բանակի հրամանատարությունը ստեղծեց զորքերի «Դիլիջանյան» հատուկ խմբավորումը՝ Երևանի վրա վճռական հարձակում գործելու համար: Այդ խումբավորման մեջ մտան 18-րդ, 20-րդ, 32-րդ հրաձգային և 18-րդ հեծյալ դիվիզիաները: Խմբավորումը այնուհետև ստացավ «Երևանյան» անվանումը, որի հրամանատար նշանակվեց 20-րդ դիվիզիայի հրամանատար Վելիկանովը: Սկսված կռիվը ստանում էր ազգային-ազատագրական պայքարի բնույթ:

Ռադիոյի միջոցով կարմիրբանակայինները տեղեկանում են, որ 11-րդ բանակի Երևանյան խմբավորումը մարտի 9-ին դուրս է եկել Ղարաքիլիսայից ու Դիլիջանից և Հյուսիսից հարձակվելու է Երևանի վրա:

Հայաստանի կարմիր բանակի հրամանատարությունը Ղամարլուի ճակատի զորքերին հրաման իջեցրեց՝ մարտի 11-ին հարձակման անցնել: Ռազմական պլանի համաձայն, այդ զորքերը կարմիր բանակի Երևանյան (Հյուսիսային) խմբավորման հետ համատեղ մարտի 18-ին գրոհով պետք է մտնեին մայրաքաղաք Երևան:

Մակայն ցրտերի և խոր ձյան պատճառով Երևանյան (Հյուսիսային) խմբավորումը չկարողացավ ժամանակին կատարել նախատեսված ծրագիրը և ստիպված կանգ առավ Ներքին Ախտայի շրջանում: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ եղավ Ղամարլուի ճակատի կարմիր զորքերի հարձակման օրը մարտի 11-ից տեղափոխել մարտի 14-ը:

Մարտի 15-ին խորհրդային զորքերը հյուսիսից Ախտայի կողմից, և հարավից՝ Ղամարլուի ճակատից, վճռական հարձակման անցան Երևանի վրա: Հարձակումը, սակայն, նույն օրը կանգնեցվեց ապստամբական զորամասերի կողմից, որոնք անցնելով հակահարձակման ջախջախեցին խորհրդային առաջապահ ուժերին:

Հատկապես ծանր վիճակ էր ստեղծվել Ղամարլուի ճակատի կարմիր զորամասերի համար: Կատաղի մարտեր էին ծավալվել, և երկու կողմերն էլ ծանր կորուստներ էին կրում:

²⁴ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 37, ց. 1, գ. 24, ք. 7-ի շրջերես:

²⁵ Մանրամասն տե՛ս *И. Таирян*, XI красная армия в борьбе за установление и упрочение советской власти в Армении, «Айастан», Ереван, 1971, էջ 250-259:

Ապստամբների հրամանատարությունը, նախագալով Երևանյան (Հյուսիսային) խըմբավորման մոտակա հարձակումը, վճռեց բոլոր ջանքերը կենտրոնացնել Ղամարլուի ճակատում՝ նպատակ ունենալով ապահովել Երևանից դեպի Դարալագյազ նահանգի ճանապարհը: Մինչև 60 տարեկան զենք կրելու ընդունակ տղամարդկանց զորահավաք հայտարարվեց, միաժամանակ Ելենովկայի ճակատից Փրկության կոմիտեի ուժերի մի մասը փոխադրվեց Ղամարլուի ճակատ:

Արյունահեղ կռիվների թեժ պահին՝ 1921 թ. մարտի 16-ին, Մոսկվայի կոնֆերանսի ՌԽՖՍՀ-ի և Թուրքիայի կառավարական պատվիրակությունները ստորագրեցին «Բարեկամության և եղբայրության մասին» պայմանագիրը: Դա հայ ժողովրդի պատմության սև էջերից մեկն էր: Պայմանագրում ոչ մի հիշատակություն չկար Արևմտյան Հայաստանի մասին: Ավելին, Գրանում վավերացվեց 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ քեմալական զորքերի կողմից Հայաստանի հողերի զավթումը: Պայմանագրի համաձայն, Հայաստանը կորցրեց ավելի քան 25 հազ. քառ. կմ տարածք: Ըստ որում, Թուրքիան խլեց 18815 քառ. կմ, այսինքն՝ Կարսի մարզը և Սուրմալուի գավառը: Մնացած 5,5 հազ. քառ. կիլոմետրը՝ Նախիջևանի մարզը և Շարուրը միավորվեցին իբրև Նախիջևանի ինքնավար հանրապետություն, որը քեմալականների ճնշման տակ տրվեց Ադրբեջանին: Ավելին, պայմանագրի մեջ կետ մտցվեց, որի համաձայն Ադրբեջանը այդ տարածքները չպետք է զիջեր «երրորդ պետությանը»՝ դրա տակ նկատի ունենալով Հայաստանը²⁶:

1921 թ. մարտի 18-ին Սիմոն Վրացյանը հետևյալ դիմումն ուղարկեց Թուրքիայի ազգային մեծ ժողովի կառավարության արևելյան ճակատի հրամանատարության ներկայացուցիչ, կապիտան Բահաեդդին բեյին.

«Հանձնեք ներկա դիմումը շտապ կերպով հասցնել Ձեր բարձր իշխանության և ինչպես անձամբ բացատրել եմ Ձեզ, շտապեցնել, որ շուտափույթ պատասխան ստացվի:

Հայաստանի կառավարությունը խնդրում է Թուրքիայի ազգային մեծ ժողովի կառավարությանը, հանուն երկու ազգերի փոխադարձ շահի, ըստ կարելիվոյն շուտ՝

1. Վերադարձնել Երևան Տաճկաստանում զոհվող հայ զինվորական ռազմագերիներին:

2. Որոշ պայմաններով հայ բանակին ռազմամթերք և առաջին հերթին ռուսական երեք զծանի հրացանի կամ տաճկական մաուզերի փամփուշտներ տալ և կամ Ռուսի ու Լեբեյի սիստեմի հրացաններ:

3. Հաղորդել մեզ, թե արդյոք Ազգային Մեծ ժողովի կառավարությունը հնարավոր է գտնում Հայաստանին զինվորական օժանդակություն հասցնել և եթե կարող է՝ ինչ չափով ու եղանակով և ինչ ժամանակամիջոցում:

Մույն դիմումն անելով՝ Հայաստանի կառավարությունը հիմնվում է այն բարեկամական հարաբերությունների վրա, որոնք հիմք են դրված Ալեքսանդրապոլի դաշնագրից սկսած և որոնք խանգարված են բոլշևիկյան իշխանության ժամանակ»²⁷:

Այդ օրերին թուրքական ենիաարներն իրենց հերթին Հայրենիքի Փրկության կոմիտեին հավաստիացումներ էին անում, ելույթներ էին ունենում բնակչության առջև: Օրինակ՝ մույն Բահաեդդին բեյը, Երևանի Գոյ-Մեչետում մահմեդական հավատացյալների առջև հանդես գալով, հայտարարել է. քանի որ բոլշևիկներից արդեն ազատագրվել է Հայաստանը, «մենք պետք է աշխատենք նրանց (ապստամբների - Ա. Ս.) հետ»: Մի ուրիշ հավաքություն նա ասել էր. «Հայեր, դուք մի վախեցեք, մենք ձեզ օգնության կգանք, կտանք զենք և ամեն կարգի ռազմական պաշար»: Վերջապես ելույթներից մեկում էլ խոստումներ տալով՝ Բահաեդդինը շեշտել էր. «Մենք պատրաստ ենք օգնել ձեզ: Դուք միայն սարքեցեք Մարգարայի կամուրջը, և մենք բոլոր ուժերով օգնելու ենք ձեզ»²⁸:

Բայց Թուրքիայից սպասվելիք «օգնությունն» այնպես էլ չեկավ: Քեմալականները միամիտ չէին, որ Մոսկվայում իրենց օգտին վերջացրած ռուս-թուրքական կոնֆերանսից հետո, երբ Հայաստանի մասնատումն արդեն իրավաբանական ձևակերպում էր ստացել, ի-

²⁶ Տե՛ս «Документы внешней политики СССР», т. 3, М., 1969, էջ 598-599:

²⁷ «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռեյոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում»: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1960, էջ 505-506:

²⁸ Ա. Եսայան, Հայաստանի միջազգային իրավական դրությունը 1920-1922, Երևան, «Միտք», 1967, էջ 183-184:

րենք իրենց համար լրացուցիչ դժվարություններ ստեղծեին: Նրանց հաշիվների մեջ Փրկու-
բյան կոմիտեին օգնելու հարց չկար, քանի որ լավ գիտեին, որ Եսայիանությունը անհուսա-
լի ճիգ է, ոչ մի հեռանկար չունի և չի կարող պարտությամբ չվերջանալ: Բայց, հակառակ
դրան, մինչև ապրիլի սկզբները, այսինքն՝ մինչև կարմիր զորքերի կողմից Երևանի վերագ-
րավումը, Կոմիտեի հավատացած էր, որ քեմալականները, այնուամենայնիվ, օգնության
կգան²⁹: Կոմիտեի հույսերը, սակայն, մնացին օդում կախված:

Փետրվարյան ապստամբությունն ուրախությամբ ընդունած Չանգեզուրի պաշտպան-
ները խանդավառված չէին Հայրենիքի Փրկության կոմիտեի այդ գործողություններով և
սկզբունքորեն հակառակ էին Սիմոն Վրացյանին և Նրա համախոհ այն գործիչներին, որոնք
հակված էին Թուրքիայի հետ դաշինքի կողմը:

Երբ Ս. Վրացյանը օգնության խնդրանքով դիմում էր Թուրքիային, այդ նույն օրը՝ մար-
տի 18-ին, ապստամբական ուժերի ընդհանուր հրամանատար, գնդապետ Սուրեն Թարխա-
նյանը (Կուտո) Ղամարլուի ռազմաճակատում գործող զորամասերին հետևյալ հրամանը
տվեց.

«Համարյա մեկ ամսից ավել տևող անընդհատ մարտերում կարմիրների քիվը խիստ
նվազել է: Նրանք չունեն պարեն և հրանոթներ: Սննդամթերքի բացակայության պատճա-
ռով ուժգին դժգոհություններ են առաջացել կարմիր զինվորների շրջանում: Ուսները չեն ու-
զուս մեռնել Հայաստանի դաշտերում և հրաժարվում են մեր դեմ պատերազմել: Ելենովկա-
յի ճակատի դրությունը մեզանից պահանջում է շտապ կարմիրներին ջախջախել Ղամար-
լուի ճակատում: Ամիրաթեշտ է կապ հաստատել Յապոնի ջոկատների հետ և մաքրել մեր
քիկունքը կարմիրներից, որպեսզի հնարավորություն ստեղծվի մեր բոլոր ուժերը տեղափո-
խել Ելենովկայի ճակատ»³⁰: Այնուհետև գնդապետը հրամայում էր դրանից հետո անցնել
ընդհանուր հարձակման և երկու օրվա ընթացքում խորհրդային ուժերին ջախջախել Ղա-
մարլուի ճակատում:

Մարտի 19-ին ժամը 6-ին ապստամբները հարձակման անցան Ղամարլուի ամբողջ
ճակատով: Խորհրդային 2-րդ գունդը Ֆիշիլևիչի հրամանատարությամբ, չդիմանալով ուժ-
գին հարձակմանը, թողեց Աղբաշը և սկսեց անկանոն նահանջել դեպի Արտաշատ: Նահան-
ջի ճանապարհը բռնեցին նաև այդ գնդի ձախ թևում գտնվող Յանիշևսկու կոմունիստական
ջոկատը և 3-րդ կարմիր գունդը՝ Բաղդասարյանի հրամանատարությամբ:

Նկատի ունենալով, որ 11-րդ բանակի առաջխաղացումը դանդաղում է, Ղամարլուի
ճակատի կարմիր զորամասերի հրամանատարությունը վճռեց դադարեցնել հարձակումը
Երևանի վրա, մինչև որ հյուսիսից կհարձակվեն 11-րդ բանակի զորամասերը: Ետ քաշվե-
լով, կարմիրբանակայինները գրավեցին Կարաբեկլյար - Բոյուկ Վեդի - Ենգիջա - Խոթ Վի-
րապ գիծը:

Այդ օրերին Սերգո Օրջոնիկիձեի կարգադրությամբ Թիֆլիսից ինքնաթիռ ուղարկվեց
Ղամարլուի շրջան, որը միջոցներ էր բերել՝ կարմիր զորամասերի համար: Շարուրի թուրքե-
րից պարենամթերք գնելու նպատակով:

Հաշվի առնելով բոլշևիկների հյուսիսային խմբավորման կողմից սպառնացող վտան-
գը, գնդապետ Թարխանյանը մարտի 24-ին վճիռ է ընդունում հաջորդ օրը լուսաբացին հար-
ձակման անցնել Ղամարլուի ճակատից նահանջած կարմիրբանակայինների վրա և նույ-
նիսկ համապատասխան հրաման է իջեցնում: Բայց նույն օրվա երեկոյան հայտնի է դառ-
նում, որ հյուսիսային ճակատի կարմիր զորամասերն արդեն պատրաստ են արագ առաջ-
խաղացումով գրավել Երևանը, ուստի նա ետ է վերցնում արդեն իջեցված հրամանը:

Մարտի 25-ի առավոտյան կարմիր զորքերի Երևանյան խմբավորումը հարձակում սկը-
սեց մայրաքաղաքի վրա երկու ուղղություններով՝ Ելենովկա - Ախտա - Մուխոյ Ֆոնտան -
Քանաքեռ - Երևան խնուրային ճանապարհով և Համամլու - Աչարան - Աշտարակ -
Երևան գծով: Միաժամանակ Երևանի վրա հարձակում սկսեցին Ղամարլուի ճակատի
կարմիր զորամասերը:

Ծավալվեցին կատաղի մարտեր, և ապստամբների ուժերը, մեծապես զիջելով կարմիր
զորամասերին, ստիպված էին նահանջել:

²⁹ Ս. Վրացյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 66-68:

³⁰ ՀՀ ՀԶԿՓԿՊԱ, Չանգեզուրի քաղաքական կոմիտեի ֆոնդ, գ. 1, ք. 25:

Ս. Վրացյանը գրել է, որ այդ ճգնաժամային պահին Հայրենիքի Փրկության կոմիտեի Երևանում գտնվող անդամները պատասխանատու գործիչների հետ միասին խորհրդակցություն են ունենում՝ քննելով անխուսափելի նահանջի հետ կապված խնդիրները: Նախատեսվում էր երկու հնարավորություն. Հայրենիքի Փրկության կոմիտեի անդամների մի մասը տրամադիր էր բովանդակ ուժով գրոհ տալ և, խորտակելով Ղանարլուի ճակատի բոլշևիկյան պատնեշը, Շարուր-Նախիջևանի վրայով միանալ Չանգեգուրին: Ոմանք գերադասում էին բռնել Բաշ-Գառնի - Միլի Զոր - Վայոց Ձոր գիծը, որ թեև դեռ փակված էր ձյունով, բայց շուտով կարող էր բացվել:

Հաշվի առնելով ստեղծված ծանր վիճակը, այն, որ՝ 11-րդ բանակի զորամասերը հյուսիսից Երևանի վրա են գալիս մեծ ուժերով, իսկ Ղանարլուի ճակատից կարմիր զորամասերը սպառնում են քիկունքից, ապստամբների հրամանատարությունը վճռեց նահանջել Վայոց Ձոր՝ Չանգեգուր անցնելու համար:

Գեպի Դարալազյազ նահանջն ապահովելու նպատակով ապստամբական զորքերը՝ մինչև 10000 հետևակ և 1000 հեծյալ, ապրիլի 1-ին հարձակման են անցնում Բոյուք Վեդիի ճակատում, սակայն այն գրավել չեն կարողանում: Հայկական 3-րդ կարմիր գնդի զորամասերը, օգտվելով տեղանքից, աննկատ դուրս են գալիս ապստամբների քիկունքը, որոնք ստիպված են լինում նահանջել Բաշ-Գառնիի ուղղությամբ:

Ապրիլի 2-ին 42 օր տևած կռիվներից հետո կարմիր զորամասերը մտնում են Երևան: Փրկության կոմիտեի զորքերի մի մասն անցնում է կարմիր բանակի կողմը, մյուս մասը՝ 5000-ից ավելի հյուծված զինվորները 8000 գաղթականության և հայ մտավորականության ընտրանու հետ բռնում են դեպի Չանգեգուր տանող ճանապարհը³¹:

Խորհրդային ուժերն առանց կանգ առնելու շարունակում են հետապնդել պարտություն կրած ապստամբական ուժերին, որոնք գաղթականության հետ շտապում են օր առաջ թողնել Արարատյան դաշտը և Մյունիքի գորքի միջոցով ապահով դարձած գծով անցնել դեպի Վայոց Ձոր:

Անդրադառնալով Արարատյան դաշտից ապրիլի 2-ին սկսած գաղթի քաղաքական նշանակությանը՝ գաղթողների թվում գտնված նշանավոր սոցիալիստ-հեղափոխական (տեւեռ) գործիչ, ՀՀ պառլամենտի անդամ Վահան Մինախոյրյանը գրել է. «Ապրիլի 2-ի գաղթը ինքնաբերաբար առաջացած մի գաղափարական ակտ էր, որ «չէ» էր ասում հակառակորդին: Մի հրամայական կամարտահայտություն էր, մի հանրաքվե, իր մինչ այդ դիտած իրադարձություններից հանած մի վճիռ, քառասուն օրվա անդուլ պայքարով նվիրագործված վերջնական վերջ, մի «ինքնորոշում» և այն էլ ոչ սեղմ, այլ «ամենալայն» մինչև «անջատվելու իրավունքի» բոլոր նշաններով, մի բան, որ ամենից առաջ «բարոյական ապտակ էր խորհրդային իշխանության»³²:

Հայրենիքի Փրկության կոմիտեն հասցրեց իր հետ վերցնել կառավարական արխիվների մի փոքր մասը, իսկ արխիվային մյուս բոլոր փաստաթղթերը մնացին Երևանում, որոնք հետագայում համալրեցին Խորհրդային Հայաստանի արխիվային ֆոնդերը: Փրկության կոմիտեն իր հետ տարավ նաև պետական գանձը: Այդ արարքին Միմոն Վրացյանը տվել է հետևյալ բացատրությունը. փետրվարի 18-ի ապստամբության հետևանքով Երևանից նահանջելիս բոլշևիկները պետական գանձը լցրել էին սնդուկների մեջ՝ իրենց հետ տանելու նպատակով, բայց հաջողվել էր տանել այդ սնդուկների միայն մի մասը, մնացածն ընկել էր Փրկության կոմիտեի ձեռքը: Այդ արկղերը մնացել էին պետական գանձարանում, չբացված, մինչև դեպի Չանգեգուր նահանջի նախօրյակին հատուկ հանձնաժողովի միջոցով դրանք հաշվառվել էին և տարվել զինվորական ջոկատի հսկողությամբ³³:

Փրկության կոմիտեի տրամադրության տակ կային Երևանից դուրս հանված երեք տեսակի դրամներ. ա) հայկական դրամանիշներ ու չեկեր, բ) սովետական դրամներ, գ) վալյուտային արժեքներ:

Հայկական դրամները տեղավորված էին 15 արկղերի մեջ, որոնց պարունակությունը կազմում էր ինը միլիարդ չորս հարյուր միլիոն ռուբլի: Սովետական դրամները կազմում էին վեց հարյուր հիսուն միլիոն ռուբլի: Վալյուտային արժեքները բազմազան էին՝ ռուսական

³¹ «Հայրենիք» ամսագիր, 1960, ապրիլ, թիվ 40 (410), էջ 89:

³² «Հայրենիք» ամսագիր, 1924, ապրիլ, թիվ 6, էջ 48:

³³ Տե՛ս Միմոն Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 628-632:

դրամ, ամերիկյան դոլար, անգլիական ֆունտ ստերլինգ, ֆրանսիական ֆրանկ, տաճկական լիրա, պարսկական դրամ, գերմանական մարկ, իտալական լիրա, դանիական կրոն, շվեյցարական ֆրանկ, ռումինական լեյ, բուլղարական լևա, մեկ կնքված արկղ ոսկյա իրեր և այլն³⁴։

«Որևէ հաշվեցույց չկա,- գրել է Վրացյանը,- թե Հայաստանի պետական գանձի ո՞ր մասը Հեղկոմն է տարել և ո՞ր մասը Հայր(ենիքի) Փրկության կոմիտեն։ Համենայն դեպս, մեծ մասը բաժին ընկավ Հեղկոմին, որը, սակայն, որևէ հաշիվ չներկայացրեց հասարակության։ Հայրենիքի Փրկության տարած գումարները ծախսվեցան կառավարական ընթացիկ պետքերու և բազմահազար տարագիրների պարենավորման համար և այլ մասին, 1921 թ. վերջերը հայկական կառավարությունը հաշիվ ներկայացրեց հանրության»³⁵։

1921 թ. ապրիլի 6-ին Հայաստանի Հեղկոմի նախագահ Ս. Կասյանը և հանրապետության ռազմժողկոմ Ալիար հեռագրում են Թիֆլիս Սերգո Օրջոնիկիձեին, որը պատրաստվում էր գալ Երևան։

«Երևանից մահաճշդները իրենց հետ տարել են պետական արժեքները, ինչպես խորհրդային, այնպես էլ հայկական բոլոր դրամները։ Խնդրում են Ձեզ հետ վերցնել նվազագույնը մեկ միլիարդ խորհրդային ռուբլի»³⁶։

Հենց այստեղ հարկ է նշել, որ Փրկության կոմիտեն գոնե բարոյական իրավունք չունեք քայքայված ու սոված երկրից դուրս տանելու վերջին միջոցները։ Ինչպիսի արդարացուցիչ փաստարկներ էլ վկայակոչում էին նրա ղեկավարները հետագայում, սակայն կատարվածը ոչ մի կերպ չի կարելի արդարացնել։ Ասենք նաև, որ նշված գումարների վրա հսկողությունը և ծախսումը իրականացվում էր մի փոքր խումբ ղեկավար մարդկանց կողմից։ Ժամանակին այդ ամենը տեղիք է տվել մեծ բողոքների ու մեղադրանքների գաղթականության կողմից, ընդվզում էր առաջացրել նաև շարքային դաշնակցականների շրջանում³⁷։ Հանրությանը ներկայացրած կիսատ-պրատ հաշվետվությունը այդպես էլ երկար ժամանակ չկարողացավ հանգստացնել կրքերը Սփյուռքում։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, 1921 թ. փետրվար-ապրիլ ամիսներին Հայաստանի կենտրոնում ծայր առած ներքին արյունահեղ կռիվները լայն արձագանք էին գտել իր ինքնության համար դաժան գոյամարտ մղող Չանգեզուրում, ուր շուտով ապաստան պիտի գրտնեին Արարատյան դաշտից հեռացող հազարավոր ապստամբներ։

А. Г. СИМОНЯН - Отклики победы и поражения февральского восстания 1921 г. в Зангезуре. - В начале декабря 1920 г. в Армении была установлена советская власть. Вскоре после прихода к власти большевики развернули по всей республике жестокие репрессии против своих политических противников и инокомыслящих - членов бывшего правительства, видных дашнакских деятелей, руководителей и функционеров армянских национальных партий, представителей национальной интеллигенции и духовенства, офицеров и высших чинов армии первой Армянской Республики. Эти и другие антигуманные репрессивные действия большевистских властей вызвали в Армении сильное недовольство среди широких слоев населения и стали причиной народного восстания под руководством дашнаков. 18 февраля 1921 г. восставшие вошли в столицу республики - Ереван. Большевистские силы отступили в направлении Дилижана и Камарлу. В Ереване сформировалось антибольшевистское правительство - "Комитет национального спасения".

Перегруппировав свои вооруженные силы, большевики перешли к контрнаступлению. Началась жестокая гражданская война, которая завершилась поражением восставших. 2 апреля 1921 г. в Армении была восстановлена советская власть.

Описывая эти события, автор статьи одновременно показывает, какой широкий отклик нашли кровопролитные столкновения в центре Армении, в Зангезуре, где его защитники вели жестокую борьбу против частей Красной Армии и азербайджанских вооруженных банд за сохранение свободы и независимости родного края. Одновременно зангезурцы создали все условия для того, чтобы принять и приютить многотысячную массу беженцев из Еревана и Арагатской долины.

³⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 629-632։

³⁵ Նույն տեղում, էջ 628-629։

³⁶ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 150, ց. 2, գ. 1, ք. 13։

³⁷ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 33, ք. 47։